# Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ <<Երևանի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի հասարակագիտության / 7 դասաժամ / առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է 2 փուլով՝ թեստավորման և հարցազրույցի /ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի/:

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է՝

1) դիմում (Ձև 1)
2) մեկ լուսանկար 3X4 չափի,
3) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
4) անձը հաստատող փաստաթուղթ,
5) «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,
6) ինքնակենսագրություն (Ձև 5),
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
10) որակավորման դասակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2023թ. դեկտեմբերի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 14.00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023թ. դեկտեմբերի 28-ին՝ ժամը 11.00-ին, Երևանի «Օլիմպոս» կրթահամալիր-ավագ դպրոցում, հասցեն՝ Գ. Հովսեփյան 6:

Տեղեկությունների համար զանգահարել 65-07-02: